«ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԱՎԱԹ 2026» ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս/թ. փետրվարի 13-ին, ժամը **16:00**-ին Հայաստանի շախմատի ակադեմիան «Շախմատի ակադեմիայի ակումբ»-ի հետ համատեղ կազմակերպում է «Շախմատի ակադեմիայի գավաթ - 2026» կայծակնային շախմատի մրցաշարի առաջին փուլը:

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երկրորդ կարգ ունեցող շախմատիստները: Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների: Մրցաշարում կհաշվարկվի միջազգային (ՖԻԴԵ) կայծակնային վարկանիշ:

Մրցաշարի մասնակիցները պետք է պարտադիր ունենան **ՖԻԴԵ-ի նույնականացման համար /FIDE ID/: ՖԻԴԵ-ի նույնականացման համար** չունենալու դեպքում մինչև փետրվարի 8-ը դիմեք Հայաստանի շախմատի ֆեդերացիա կամ այցելեք հետևյալ հղումով՝ **https://chessfed.am/am/fide-registration-form**:

Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը կկազմի մուտքավճարների 60%-ը:

Մրցանակներ	
Հիմնական	**Հատուկ**
I	Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի**
II	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12 տարեկան մասնակից**
III	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12**

	տարեկան աղջիկ մասնակից
IV	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10 տարեկան մասնակից**
V	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10 տարեկան աղջիկ մասնակից**
	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **8 տարեկան մասնակից**
	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **8 տարեկան աղջիկ մասնակից**

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

Մրցաշարի մասնակցության բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:

Մուտքավճար

Կոչում/գործակից	**Մուտքավճար**
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ	Անվճար
2101 և ավելի վարկանիշ ունեցող մասնակիցներ	4 000 ՀՀ դրամ
II, I կարգ – 2100 վարկանիշ ունեցող մասնակիցներ	5 000 ՀՀ դրամ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Հիշեցնում ենք, որ մրցաշարի մասնակիցների գրանցումը կատարվում է օնլայն տարբերակով մինչև փետրվարի **10-ը, 18:00-ն**: Հայաստանի շախմատի ակադեմիայի կայքէջում https://www.chessacademy.am/ անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:

Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել «Շախմատի ակադեմիայի ակումբ»-ի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ

Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ՝ 1570091773770100

«ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԱՎԱԹ 2026» ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար:

Հեռախոսահամար՝ **010-448479:**

Գրանցումը հաստատվում է վճարումը կատարելուց հետո: